

## Կ Ա Ր Ծ Ի Ք

ՍԱՍՈՒՆ ՄՅԱՍՆԻԿԻ ԲԱԽՇՅԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ,  
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ  
ՀԱՄԱՐ

Տնտեսական համակարգի բնականոն գործունեության ապահովման և երկրի զարգացման առումով չափազանց կարևոր նշանակություն ունի բնական հարստությունների առկայությունը և դրանց արդյունավետ շահագործումը: Զարգացման ներկա փուլում նշված խնդիրների լուծումը ձեռք է բերել չափազանց մեծ կարևորություն՝ պայմանավորելով երկրի զարգացման հեռանկարները: Հատկապես Հայաստանի Հանրապետությունում, որն ունի սահմանափակ բնական հարստություններ, այդ խնդիրն առավել է կարևորվում և պահանջում լուծման արդյունավետ մոտեցումների կիրառում: Այս համատեքստում, հանրապետության համար կարևոր նշանակություն ունի մետալուրգիական արդյունաբերության զարգացման հետ կապված հիմնախնդիրների լուծումը: Վերջինիս հետ ուղղակիորեն կապված է մոլիբդենի, ոսկու, պղնձի արդյունահանման և առկա հանքավայրերի ռացիոնալ օգտագործման հարցը, որը հանրապետության համար ունի ռազմավարական նշանակություն: Այդ առումով, ակնհայտորեն, կարևոր նշանակություն ունի մետալուրգիական արտադրության զարգացման տնտեսական մեխանիզմի կատարելագործումը, ինչը հնարավորություն կտա համապատասխան խթանների միջոցով նպաստել առկա ռեսուրսների արդյունավետ և ռացիոնալ շահագործմանը: Ընդ որում, այն պետք է ուղղված լինի, մի կողմից, բնական հարստությունների արդյունավետ օգտագործման խթանմանը, իսկ մյուս կողմից՝ բնապահպանական միջավայրի բարելավմանը: Նման խնդրի լուծումը ենթադրում է տվյալ գործընթացի տեսամեթոդական հիմքերի համակողմանի ուսումնասիրություն, տվյալ ոլորտում առկա հիմնախնդիրների բացահայտում և դրանց արդյունավետ լուծումների մշակում: Գրախոսվող աշխատանքում

իրականացված հետազոտությունները նվիրված են այդ հիմնախնդիրների ուսումնասիրությանը և դրանց լուծմանն ուղղված նոր մոտեցումների մշակմանը, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի **արդիականությունը և հրատարակությունը:**

Ատենախոսության **կառուցվածքը** հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածական մասում դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները, Այստեղ բնութագրված են տեսական ու մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության **առաջին՝ «ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնահարցերը և ժամանակակից միտումները» գլխում** հիմնավորվել է մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման անհրաժեշտությունը, ներկայացվել են դրա էությունը, ձևերը և բաղադրիչները, ինչպես նաև դրանց դրսևորման առանձնահատկությունները հանրապետության մետալուրգիական արդյունաբերության ոլորտում:

Աշխատանքի **երկրորդ՝ «Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերական կայուն զարգացման առկա իրավիճակի ուսումնասիրություն» գլխում** վերլուծվել է մոլիբդենի, ոսկու, պղնձի, ալյումինի և պողպատի արտադրության ոլորտների վիճակը և ներկայացվել են կայուն զարգացման ինդիկատորները:

Ատենախոսության **երրորդ՝ «Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերական կայուն զարգացման բարելավման հիմնական ուղիները» գլխում** մշակվել են Հայաստանի Հանրապետությունում մետալուրգիական արդյունաբերության զարգացման հիմնական ուղղություններն ու մոտեցումները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ **հիմնավորվածություն և հավաստիություն:**

Աշխատանքի **գիտական նորոյթը** կայանում է նրանում, որ մշակվել է ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացումը բնութագրող ինտեգրալ ինդիկատոր, բացահայտվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները և ներկայացվել են դրանց լուծման ուղիները, իրականացվել է էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիայով պղնձի արտադրության ծրագրի տնտեսական գնահատում և հաշվարկվել է դրա մակրոտնտեսական պոտենցիալ ազդեցությունը, առաջարկվել է տվյալ ոլորտի հարկային մեխանիզմի բարելավման մոտեցում:

**Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից** հետազոտության արդյունքներն ընձեռում են որոշակի հնարավորություն կողմնորոշվել մետալուրգիական արդյունաբերական կայուն զարգացման հիմնախնդիրների լուծման հարցում:

Ատենախոսության **գիտագործնական նշանակությունը** պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել հանրապետությունում մետալուրգիական արդյունաբերական զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման ընթացքում:

Ատենախոսության վերաբերյալ կան **դիտողություններ**, որոնք գրախոսվող աշխատանքի թեմայի շուրջ ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները.

1. Ատենախոսությունում իրականացված վերլուծությունների արդյունքում հեղինակը որպես մետալուրգիական արդյունաբերության ոլորտի տնտեսական արդյունավետությունը բնութագրող ցուցանիշ է առաջարկում դիտարկել

պետական բյուջե վճարվող հարկերի և այլ վճարների մեծությունը: Որոշակի վերապահումներով համաձայն լինելով նման տեսակետի հետ, կարծում ենք, որ այստեղ խոսքը պետք է գնար կոնկրետ հարկատեսակների (մասնավորապես՝ շահութահարկի) մասին, որոնց դինամիկայի վերլուծությունը պետք է հիմք հանդիսանար նման պնդման համար:

2. Բնական ռեսուրսների օգտագործման գործընթացի արդյունավետ կարգավորումը ենթադրում է այդ ուղղությամբ ինչպես տնտեսական, այնպես էլ վարչական լծակների կիրառում: Ընդ որում, խիստ կարևորվում է դրանց միջև օպտիմալ հարաբերակցության ապահովման խնդիրը: Հատկապես Հայաստանի Հանրապետությունում, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, այն առավել մեծ ուշադրության կարիք ունի: Կարծում ենք, որ այդ ուղղությամբ հեղինակի ուսումնասիրությունները պետք է կրեին առավել խորքային բնույթ:
3. Պղնձի, ոսկու, մոլիբդենի արդյունահանման ոլորտում գոյություն ունեցող կարևոր խնդիրներից մեկը տնտեսական օգուտի գնահատումն է: Խնդիրն առավել արդիական է մեր հանրապետությունում, որտեղ որոշ հանքավայրերի կտրվածքով խիստ վիճահարույց է դրանց շահագործման տնտեսական օգուտի գնահատումը՝ պետության և հասարակության տեսանկյունից: Կարծում ենք, այդ ուղղությամբ հեղինակի առավել համակողմանի ուսումնասիրությունների իրականացումը կարող էր նպաստել այդ ոլորտում առկա մի շարք խնդիրների պարզաբանմանը:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արժանիքները: Դրանք հետապնդում են հանրապետությունում մետալուրգիական արդյունաբերական կայուն զարգացման հիմնախնդիրների լուծմանը նվիրված հետազոտ ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Ս. Բախշյանի թեկնածուականատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և

ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման խնդիրների լուծման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Ս. Բախշյանի «Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,**  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
14.12.2023թ.



**Վ. ԲՈՍՍԱՆՋՅԱՆ**

**Պարոն Վ. ԲՈՍՍԱՆՋՅԱՆԻ**  
ստորագրությունը հաստատում եմ՝  
բ. գ. թ.  
ԵՊՀ գիտական քարտուղար



**Մ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

14.12.2023թ.